

ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ Նունե Մովսիսյանի ողջույնի ելույթը՝ ուղղված  
հեծանվաարշավի մասնակիցներին  
07.09.2016թ.

ՀՀ անկախության 25 ամյակի առիթով ՀՀ Սպորտի և երիտասարդության  
հարցերի նախարարության նախաձեռնությամբ սեպտեմբերի 7-ին մեկնարկեց  
հեծանվաարշավ-ուխտագնացություն:

Ուրախ եմ, որ այսօր հեծանվորդները օլիմպիական մարզադպրոցի տնօրեն  
պարոն Շարբաթյանի գլխավորությամբ Երևան-Աշտարակ-Թալին-Մարալիկ-  
Գյումրի երթուղին անցնելիս կանգ են առել Արագածոտնի մարզկենտրոն  
Աշտարակ քաղաքում:

Հեծանվաարշավի նպատակը սպորտի և առողջ ապրելակերպի  
պրոպագանդումն է:

Թող օլիմպիական դպրոցը միշտ հաջողություններ գրանցի նման օրինակելի  
նախաձեռնություններում, իսկ մարզի երիտասարդները ևս ունենան իրենց  
մասնակցությունը նման գործերում:

Ձեզ բարի ընթացք:

«Որտեղ կա կամք, այնտեղ՝ ճանապարհ»: